ArmLur.am

ISSN 1829-2763

ՕՐԱԹԵՐԹ ԲՈԼՈՐԻ ԵՎ ԱՄԵՆ ԻՆՉԻ ՄԱՍԻՆ

Ժողովուրդ

25 հունվարի չորեքշաբթի 2023
տպագրության ԺԲ տարի

10
(2676)

100 դրամ

քաղ. Երեւան, Աբովյան 22ա/3 (0010) + 374 10 546423 info.armlur@gmail.com, info.zhoghovurd@gmail.com

ՓԱՇԻՆՅԱՆԻ ԹԻՄԱԿԻՑՆԵՐԸ ԽԱԲԵԼ ԵՆ. ՄԱՍ 10

Գաղտնիք չէ, որ իշխանության ներկայացուցիչներն իրարից անկախ հայտարարություններ են անում, ապա հերքում կամ այլ անկյունից ներկայացնում իրենց: Այդպես եղավ նաեւ միութենական պետության կազմի մեջ մտնելու համար ՀՀ-ի վրա գործադրվող ճնշումների հարցով: Մասնավորապես, հունվարի 10-ին վարչապետ Նիկոլ Փաշինյանը լրագրողների հետ հանդիպմանն ասաց, որ ՌԴ-ի հետ միութենական պետության կազմ մտնելու պաշտոնական առաջարկ Հայաստանին չի եղել, բայց, միեւնույն ժամանակ, հավելեց, որ իրականությունն այդքան պարզ չէ, ինչքան թվում է: «Մեզ համար ՀՀ ինքնիշխանությունը, անկախությունը, պետականությունը բացարձակ արժեքներ են, եւ մեր պարտքն ու առաքելությունն ենք համարում ամեն ինչ անել մեր հայրենիքի պետականության հարատեւությունն ապահովելու համար»,- ասաց Նիկոլ Փաշինյանը: Լրագրողի հարցին՝ իսկ ոչ պաշտոնական խողովակներով միութենական պետության կազմ մտնելու ճնշումներ եղել են արդյոք, Փաշինյանը պատասխանեց. «Ոչ պաշտոնական խողովակներ ասելով՝ ի՞նչ նկատի ունենանք, օրինակ՝ փորձագետների կողմից շարունակ զարգացվող խոսույթն էլ կարելի է ոչ պաշտոնական համարել, ոչ պաշտոնական շփումներն էլ»: Հարցին՝Արմեն Գրիգորյանն արդյոք դրանք նկատի ուներ, երբ խոսում էր ճնշումների մասին, վարչապետը պատասխանեց. «Ենթադրում եմ՝ այդ թվում դրանք է նկատի ունեցել, այո՛»: Ըստ էության, նա հերքեց Արմեն Գրիգորյանի դիտարկմանը, որ այդպիսի պաշտոնական առաջարկ կամ ճնշումներ չեն եղել:

Ազգային ժողովի «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունը երեկ՝ հունվարի 24-ին, հանդիպել է պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի հետ: Հանդիպման առիթը Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղում տեղի ունեցած ողբերգական միջադեպն էր, ինչի հետեւանքով 15 ժամկետային զինծառայող հրդեհի զոհ դարձավ: «Ժողովուրդ» օրաթերթին Պապիկյան-ՔՊ դռնփակ հանդիպումից մանրամասներ հայտնի դարձան: Այսպես, ՔՊ-ամերձ մեր աղբյուրների փոխնացմամբ՝հանդիպման ժամանակ թեեւ ամենասուր հարցերն են ուղղվել պաշտպանական գերատեսչության ղեկավարին, բայց հանդիպումը, ընդհանուր առմամբ, անցել է բավականին հանգիստ, ոչ լարված մթնոլորտում: «Խոսել ենք այն բոլոր խնդիրների, մտահոգիչ երեւույթների մասին, որ կա ոչ միայն բանակի, այլ նաեւ հասարակության ներսում առհասարակ: Բոլորս էլ հասկանում ենք, որ դեպքի պատասխանատուն (գոնե քաղաքական մակարդակում) բոլորս ենք, թիմն է, հետեւաբար իրավիճակը լարելու կամ լարվածություն ստեղծելու կարիք ընդհանրապես չկար»,- ասաց մեր աղբյուրն ու ավելացրեց, որ հանդիպման ժամանակ Պապիկյանի հրաժարականի հարցը չեն քննարկել. այդ մասին անգամ հարց-տեսակետ չի հնչել: Ավելին՝ներկաները Պապիկյանին քաջալերել են, որ օրհասական այս պահին, երբ բանակն իսկապես մեջքն ուղղելու կարիք ունի, չպետք է թույլ տալ, որ նա հանկարծ որոշի թողնել հեռանալ: Տեղեկացանք նաեւ, որ պաշտպանության նախարարի հետ հանդիպմանը շատ թվով պատգամավորներ են բացակայել. մի մասը՝գործուղումների մեջ գտնվելու, մի մասը՝այս օրերին տարածված վիրուսային հիվանդությունների, մի մասն էլ պարզապես նպատակահարմար չգտնելու պատճառաբանությամբ է բացակայել:



ՀՀ պաշտպանության նախարարությունը Ազատ գյուղի ողբերգական հրդեհի հենց հաջորդ օրն իր կարիքների համար մարդատար ավտոմեքենաներ է գնել: «Ժողովուրդ» օրաթերթը պաշտոնական աղբյուրներից տեղեկացավ, որ ՊՆ-ն թվով 15 ավտոմեքենա է ձեռք բերել, իսկ պայմանագիրը կնքվել է հունվարի 20-ին՝15 զինծառայողի կյանք խլած հրդեհից 1 օր հետո: Մեզ հայտնի դարձավ, որ Պաշտպանության նախարարությունը գնել է 2023 թվականի արտադրության, սպիտակ երանգի, «Հունդաի Էլանտրա» մակնիշի մեքենաներ: Պայմանագիրը կնքվել է «Կապիտալ մոթորս» ընկերության հետ: «Ժողովուրդ» օրաթերթը տեղեկացավ, որ մեքենաների գնման գումարը, առանց ԱԱՀ-ի, կազմել է 165 մլն դրամ. լրացուցիչ ԱԱՀ-ն կազմել է 33 մլն դրամ: 15 մեքենան պետական բյուջեի վրա արժեցել է 198 մլն դրամ կամ մոտ 489 հազար ԱՄՆ դոլար: ՊՆ կարիքների համար նախատեսված մեկ ավտոմեքենայի համար ծախսվել է 13 մլն 200 հազար դրամ կամ 32 հազար 592 դոլար (ներառյալ ԱԱՀ-ն): Դե, իհարկե, բնական է, որ ՊՆ-ն ավտոմեքենա է գնում իր կարիքների համար, բայց բանակն այս պայմաններում պահելու, անփութության հետեւանքով 15 զոհ տալու ֆոնին նման պահվածքն առնվազն անազնիվ է: Ստացվում է, որ, մի կողմից, առաջնագծի զինվորները զրկված են տաքանալու տարրական պայմաններից, մյուս կողմից՝ ՊՆ բարձրաստիճան պաշտոնյաները պետք է երթեւեկեն 2023 թվականի արտադրության, չօգտագործված ավտոմեքենաներով: Ինչ խոսք, հայրենիքը պաշտպանելու յուրովի մոտեցում է:

Իշխող «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցությունն այս օրերին ակտիվ քննարկումների մեջ է: Մինչ այս իշխանականները, երկրի առաջ ծառացած մարտահրավերները թողած, քննարկում էին ընդդիմադիրներին մանդատից զրկել-չզրկելու հարցը, հիմա էլ անցել են արդեն «Հայաստան» խմբակցության պատգամավորներ Սեյրան Օհանյանին եւ Արմեն Չարչյանին անձեռնմխելիությունից զրկելուն համաձայնություն տալու հարցին: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկություններով՝ իշխող ֆրակցիային առնչվող այս եւ մյուս բոլոր կարեւոր որոշումները կայացնում է ՔՊ «վերնախավը»՝ ի դեմս խմբակցության ղեկավար Հայկ Կոնջորյանի, Ալեն Սիմոնյանի եւ, իհարկե, Նիկոլ Փաշինյանի: Տեղեկացանք, որ վերջիններս որոշումներ կայացնում են առանց թիմակիցների հետ քննարկման, առանց նրանց կարծիքը հարցնելու: Ավելին՝խմբակցության որոշ պատգամավորների (որոնք համեմատաբար հաճախ են շփվում մամուլի հետ) միայն վերջին պահին են տեղեկացնում որոշումների մասին, որպեսզի հանկարծ արտահոսք չլինի: Պատգամավորներին ասված է, որ բոլոր կարեւոր իրադարձությունների շուրջ իրավասու են խոսել միայն խմբակցության ղեկավարը եւ քարտուղարը: Իհարկե, իշխող ֆրակցիայում կան չեզոք պատգամավորներ, որոնց համար միեւնույնն է՝ինչ է կատարվում խմբակցության ներսում, ինչ որոշումներ կկայացվեն, իրենք միայն «դիտորդի», կոճակ սեղմողի դերում են:

ՊԱՊԻԿՅԱՆԻ ՀՐԱԺԱՐԱԿԱՆ

ԳՈՒՅԵ ԱՎԵԼԻ ՎԱՏ ՎԻՃԱԿՈՒՄ ՀԱՅՏՆՎԵՆՔ

«Գեղարքունի մարզի Ազատ գյուղում տեղի ունեցած ողբերգական միջադեպի բոլոր հանգամանքներն ու դեպքի մանրամասները ներկայացնելուց առաջ նախ պետք էր լսել դեպքի մասնակից զինվորականներին, արդա նոր միայն կառավարության նիստի ժամանակ, առաջինը հայտնողի մոլուցքով տարված, շտապել ասել, թե ինչ ու ինչպես է կատարվել». տեսակետը ռազմական փորձագետ, «Հենակետ» վերլուծական կենտրոնի ղեկավար Վիտալի Մանգասարյանինն է, որ «Ժողովուրդ» օրաթերթի հետ զրույցում ասում է՝ շտապողականություն դրսևորելուց առաջ պետք էր հանգիստ պայմաններում լսել ողջ մնացած ժամկետային զինվորականների տեսակետը:

Մանգասարյանի համոզմամբ՝կառավարության նիստի ժամանակ Փաշինյանի նկարագրածն ու դեպքի վերաբերյալ նախնական վարկածի տրամադրումը պարզապես սարսափ է, քանի որ, առանց հանգամանքների շղթան պարզելու, ամբողջ մեղքն ու պատասխանատվությունը սպայական կազմի վրա դրվեց:

Իսկ ամենասարսափելին այն է, ասում է մեր զրուցակիցը, որ հրապարակային կերպով հայտարարվում է, թե սպան, հնարավոր է, բենզինով լի տարան միտումնավոր է զինվորների ուղղությամբ նետել: Միևնույն պահին Մանգասարյանը նաեւ հարց է բարձրացնում՝ արդյոք կարող ենք մեզ նման շռայլություն թույլ տալ ու սպայական անձնակազմի նկատմամբ (որոնց պատրաստման համար, ի դեպ, պետությունը 10-15 տարի ժամանակ է ծախսում) նման տեսակ նվաստացուցիչ վերաբերմունք ցուցաբերել:

Նորմալ երկրում, շարունակում է, պաշտպանության նախարարը վաղուց արդեն հրաժարականի դիմում գրած կլիներ, բայց Հայաստանում կառավարման ու կադրերի նշանակման այնպիսի ճգնաժամ է, որ հստակ չէ՝ պաշտպանության նախարար Սուրեն Պապիկյանի հրաժարականից հետո ով կարող է զբաղեցնել երկրի համար առաջնային նշանակության կարեւորագույն այդ պաշտոնը:

Հետեւելով իշխող «Քաղաքացիական պայմանագրի» կադրային քաղաքականությանն ու անտրամաբանական նշանակումների քրոնիկոնին, ասում է փորձագետը, հանգում ենք ժողովրդական հայտնի խոսքին՝ մինչեւ չգա հետինը, չի հիշվի առաջինը:

«Ժողովուրդ» օրաթերթը զրուցել է վերլուծական կենտրոնի ղեկավարի հետ:

-Պարոն Մանգասարյան, Գեղարքունիքի մարզի Ազատ համայնքում տեղի ունեցած ողբերգական դեպքից հետո բազմաթիվ հարցեր են մնացել անպատասխան: Ի՞նչ գնահատական կտաք, ի՞նչ էր տեղի ունեցածը:

-Նախ ցավակցում եմ բոլոր մեր զոհված զինվորների հարազատներին, բարեկամներին եւ մեզ բոլորիս: Իրոք, տեղի է ունեցել ողբերգական դեպք, որի մասին դժվար է առանց էմոցիաների խոսել, սակայն փորձենք հնարավորինս սառնասիրտ եւ տրամաբանական վերլուծել, թե ինչ տեղի ունեցավ, եւ այդ դեպքից հետո ինչ քայլեր տեղի ունեցան:Պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ դեպքը տեղի է ունեցել գիշերը: ԱԻՆ-ի փոխանցած տեղեկատվության համաձայն՝ լուսադեմ 6:00-7:00-ի հատվածում է կրակը մարվել, եւ, պաշտոնական տեղեկատվության համաձայն, մենք ունենք 15 զոհ եւ առնվազն 3-4 վիրավոր, որոնք տարբեր վնասվածքներ ունեն: Պաշտոնական տեղեկատվությունը, որը Փաշինյանը փոխանցեց դեպքից 1-2 ժամ հետո, պետք է առնվազն հիմնված լիներ ողջ մնացած մարդկանց ցուցմունքի վրա: Մենք շատ լավ հասկանում ենք, որ շոկային իրավիճակում, պանիկայի իրավիճակում գտնվող զինծառայողները սկզբնական փուլում ադեկվատ ցուցմունք չէին կարող տալ, եւ սա շատ լավ պետք է հասկանար նաեւ ռազմաքաղաքական ղեկավարությունը: Կառավարության նիստի ժամանակ Փաշինյանը ներկայացրեց, թե ինչպես է տեղի ունեցել դեպքը, եւ բոլոր սլաքներն ուղղվեցին դեպի սպայակազմ: Մենք հիշում ենք, թե նա ինչպես է նկարագրում այդ դեպքը. նա ասում էր, որ սպան փորձել է վառել վառարանը, այն բռնկվել է, եւ գուցե ոչ միտումնավոր նա այդ տարան նետել է մեր զինվորների ուղղությամբ: Մենք այստեղ սարսափելի երեւույթի ենք հանգում. երկրի ղեկավարը, փաստորեն, միանգամից սլաքներ է ուղղում սպայական կազմի վրա, եւ նիստի ժամանակ այդ սպան դառնում է տեռորիստին հավասար մի մարդ: Նույնիսկ հրապարակային ասվում է այն մասին, որ նա միգուցե միտումնավոր է այդ տարան նետել դեպի իր անձնակազմը. սա շատ վատ տեղ տանող ճանապարհ է:

-Ի՞նչ պետք է հաջորդեր այս դեպքին:

-Նորմալ երկրներում պաշտպանության նախարարը հենց առաջին օրը պետք է դիմում գրեր եւ հրաժարական տար: Մենք ունենք սարսափելի իրավիճակ եւ չգիտենք, թե ինչպես են այդ կարեւոր պաշտոններին նշանակվում մարդիկ: Լավ, ասենք Սուրեն Պապիկյանը, իր մեղքի բաժինը գնահատելով, մտածում ենք՝ գնա, ո՞ւմ են այս իշխանությունները նշանակելու պաշտոնին: Գալիս ենք այն եզրակացության, որ միգուցե ավելի սարսափելի վիճակում հայտնվենք:

Զրուցեց ՍԵՎԱԿ ՎԱՐԴՈՒՄՅԱՆԸ

ՀԵՌԱԽՈՍԱԶՐՈՒՅՑ

ԱՄՆ ՊԵՏՔԱՐՏՈՒՂԱՐԻ ԱՐՁԱԳԱՆՔԸ

ԱՄՆ պետքարտուղար Էնթոնի Բլինքենը երեկ հեռախոսազրույց է ունեցել Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւի հետ: Նա հեռախոսազրույցի ժամանակ կոչ է արել անհապաղ բացել Լաչինի միջանցքը:

Պետդեպարտամենտի մամուլի ծառայությունից հայտնում են՝ Բլինքենն ընդգծել է, որ Լաչինի միջանցքում հումանիտար ճգնաժամի վտանգը խաթարում է Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ խաղաղության պայմանագրի հեռանկարները:

Պաշտոնական հաղորդագրության համաձայն՝ Ադրբեջանի նախագահ Իլհամ Ալիեւը կրկնել է պաշտոնական Բաքվի դիրքորոշումը եւ հերքել, թե Լաչինի միջանցքի փակ է:

Իլհամ Ալիեւը, ըստ ադրբեջանական լրատվամիջոցների, ընդգծել է, որ պետք է դադարեցնել հանքավայրերի անօրինական շահագործումը Ադրբեջանի այն տարածքներում, որտեղ ժամանակավորապես տեղակայված են ռուս խաղաղապահները: Միեւնույն ժամանակ, ըստ նրա, այնտեղ պետք է ապահովվեն Ադրբեջանի կողմից մշտական մոնիտորինգ եւ ստուգումներ:

Ադրբեջանի նախագահը նաեւ նշել է, որ Բաքուն հավատարիմ է խաղաղության գործընթացին եւ Հայաստանի եւ Ադրբեջանի միջեւ հարաբերությունների կարգավորմանը, որը պետք է պարունակի միայն երկկողմ հարաբերությունների կարգավորում՝ հիմնված միջազգային իրավունքի նորմերի ու սկզբունքների եւ Ադրբեջանի կողմից ներկայացված հինգ սկզբունքների վրա: Նկատենք՝ Բլինքենը նաեւ Հայաստանի վարչապետ Նիկոլ Փաշինյանի հետ էր հեռախոսազրույց ունեցել մի քանի օր առաջ: Դրանից հետո ԱՄՆ պետքարտուղարը թվիթերյան գրառում արեց, թե Փաշինյանի հետ խոսել է Ադրբեջանի հետ երկկողմ խաղաղ քննարկումները վերսկսելու քայլերի մասին:

Վարչապետը նշել էր, որ Լաչինի միջանցքի արգելափակմամբ Ադրբեջանը հերթական անգամ դիմում է սադրիչ գործողության եւ փաստացի խախտում 2020 թվականի նոյեմբերի 9-ի եռակողմ հայտարարությամբ ստանձնած պարտավորությունը: Հավելենք, որ Լաչինի միջանցքը շարունակում է փակ մնալ արդեն 45 օր:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՄԻՐԶՈՅԱՆԸ ՀԱՐՑԱՔՆՆՎԵԼ Է

«Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ ՀՀ արտաքին գործերի նախարար Արարատ Միրզոյանն իրեն ծեծի ենթարկելու դեպքի առթիվ նախաձեռնված քրեական վարույթով հարցաքննվել է: Իսկ ի՞նչ է նա պատմել քննիչին: «Ժողովուրդ» օրաթերթի տեղեկությունների համաձայն՝ վերջինս նշել է, թե որեւէ բան չի հիշում եւ այդ պահին միայն մտածել է՝ ինչպես պաշտպանվի եւ փրկի իր կյանքը: Հիշեցնենք, որ օրերս «Ժողովուրդ» օրաթերթին ուշագրավ մանրամասներ էին հայտնի դարձել, թե Արարատ Միրզոյանին ծեծի ենթարկելու գործով կալանավորված անձն ինչ է հայտնել Ազգային անվտանգության ծառայությունում: Նա, մասնավորապես, նշել էր, որ ցանկացել է հարվածել Միրզոյանին, սակայն կարծում է, որ իր հարվածը Արարատ Միրզոյանին չի հասել: Նշենք, որ Ազգային անվտանգության ծառայությունը հայտնել էր, որ քաղաքացի Ա.Բ-ն, 2020 թվականի նոյեմբերի 9-ին տեղեկանալով, որ մայրաքաղաք Երեւանում գտնվող ՀՀ կառավարության, Ազգային ժողովի վարչական շենքերի, դրանց ներսում եւ ՀՀ վարչապետին հատկացված կեցավայրի մոտ կատարվում են զանգվածային անկարգություններ, միացել է ՀՀ ԱԺ նախագահ Արարատ Միրզոյանի նկատմամբ բռնություն գործադրող զանգվածային անկարգությունների մասնակիցներին, ճեղքելով վերջիններիս շարքերը՝ մոտեցել է արդեն իսկ գետնին ընկած Արարատ Միրզոյանին եւ ոտքով հարվածել է վերջինիս, որ սիրտը հովանա. 44 օր խաբվելուց հետո պարտվեցինք:

ՌԴ ՔԱՂԱՔԱՑԻՆԵՐ

ՀՀ վիճակագրական կոմիտեից տեղեկացանք, որ նախորդ տարվա հունվար-նոյեմբեր ամիսներին Հայաստան ժամանել է Ռուսաստանի Դաշնության 1 մլն 16 հազար 223 քաղաքացի: Ի դեպ, նույն ժամանակահատվածում ՀՀ-ից դուրս է եկել 967 հազար 696 ռուս:

Նշենք, որ ռուս-ուկրաինական պատերազմով պայմանավորված՝ նախորդ տարվա մարտի սկզբից Ռուսաստանից Հայաստան են ժամանել մեծ թվով Ռուսաստանի, նաեւ ՌԴ-ում բնակվող Ուկրաինայի քաղաքացիներ: Բացի այս, տեղեկացնենք, որ հունվար-նոյեմբեր ամիսներին Հայաստան ժամանել է Ուկրաինայի 27 հազար 361 քաղաքացի, դուրս եկել՝27 հազար 310 ուկրաինացի:

Իրանի Իսլամական Հանրապետությունից Հայաստան նախորդ տարվա 11 ամիսներին ժամանել է 124 հազար 467 իրանցի, դուրս եկել՝ 125 հազար 695-ը:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ նախորդ տարվա հունվար-նոյեմբեր ամիսներին ՀՀ ժամանել է 19 հազար 887, դուրս է եկել 18 հազար 293 հնդիկ: Նշենք, որ Հայաստանը Հնդկաստանի քաղաքացիների համար աշխատանք գտնելու ամենահարմար վայրերից մեկն է համարվում: Հնդիկները մեր երկրում աշխատանք գտնում են տարբեր ոլորտներում, այդ թվում՝ գյուղատնտեսական, շինարարական:

ՎԱՐԿԱՅԻՆ ԽՆԴԻՐՆԵՐ

«Օրեր առաջ խորհրդարանում պատիվ եմ ունեցել հերթական անգամ ընդունել 44-օրյա պատերազմում անմահացած զինվորների ծնողներին եւ հարազատներին»,- հաղորդագրություն է տարածել ԱԺ մարդու իրավունքների պաշտպանության եւ հանրային հարցերի մշտական հանձնաժողովի նախագահ, անկուսակցական Թագուհի Թովմասյանը:

«Ծանր է նրանցից լսել այս կամ այն չլուծված խնդրի կամ ցուցաբերված ոչ պատշաճ վերաբերմունքի մասին: Ծնողներից յուրաքանչյուրի անհատական խնդիրն իմ խնդիրն եմ համարում եւ իմ իրավասությունների շրջանակներում փորձելու եմ անել հնարավոր ամեն ինչ, որպեսզի լուծում ստանան դրանք:

Տեղեկացնեմ, որ զոհված զինծառայողների ծնողների վարկային խնդիրների լուծման կամ նրանց որեւէ տարբերակով համապատասխան աջակցություն ցուցաբերելու անհրաժեշտությունից ելնելով՝ գրություն եմ ուղարկել Հայաստանի բանկերի միության գործադիր տնօրենին՝ խնդրելով իրականացնել հնարավոր քայլեր վերջիններիս վարկային խնդիրների լուծման ուղղությամբ:

Խոնարհումս եմ հայտնում հերոսների ծնողներին. ուժ ու կորով ձեզ, սիրելինե՛րս»:

ՆՈՐ ԳՈՐԾՈՒՂՈՒՄՆԵՐ՝ ԱԺ-ԻՑ

Ազգային ժողովի պատգամավորներն ու աշխատակազմի ներկայացուցիչները հերթական գործուղումներին են մեկնում:

Այսպես, ArmLur.am-ը տեղեկացավ, որ Համաշխարհային կառավարության գագաթնաժողովին մասնակցելու նպատակով 2023 թվականի փետրվարի 13-15-ը Դուբայ (Արաբական Միացյալ Էմիրություններ) կգործուղվի ԱԺ «Քաղաքացիական պայմանագիր» խմբակցության պատգամավոր Խաչատուր սուքիասյանը: Նշենք, որ ԱՄԷ պատգամավորը մեկնում է անձնական միջոցների հաշվին:

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանի մեկ այլ որոշման համաձայն էլ աշխատանքային այցով 2023 թվականի հունվարի 28-ից փետրվարի 4-ը Փարիզ (Ֆրանսիայի Հանրապետություն) կգործուղվեն ԱԺ աշխատակազմի ղեկավար-գլխավոր քարտուղար Վահան Նարիբեկյանը, վերջինիս տեղակալ Հեղինե Խաչիկյանը, ԱԺ նախագահի օգնական Աշխեն Հայրապետյանը (հունվարի 28-ից փետրվարի 2-ը), ԱԺ աշխատակազմի հասարակայնության հետ կապերի եւ հաղորդակցության վարչության պետ Լաուրա Անտոնյանը: Նշենք, որ այցի հետ կապված բոլոր տեսակի ծախսերը՝ճանապարհածախսը, օրապահիկն ու գիշերավարձը, ՀՀ բյուջեի հաշվին են կատարվելու:

ԱՐՑԱԽԸ՝ ԵՐԵԿ

ՓԱԿ Է ԳԱԶԱՏԱՐԻ ՓԱԿԱՆԸ

Ստեփանակերտում ու Արցախի շրջաններում երեկվանից դադարեցվել է գազալցակայանների աշխատանքը: Խողովակներում մնացած կուտակված գազը տրամադրվելու է միայն հիվանդանոցներին ու կենսական նշանակության օբյեկտներին. տեղեկացնում է Արցախի օպերատիվ շտաբը: Ադրբեջանը շարունակում է փակ պահել Արցախ մտնող գազատարի փականը, թույլ չի տալիս վերականգնել էներգամատակարարումը:



Հայաստանից Արցախ մտնող միակ հոսանքի գիծը վթարվել է հունվարի 9-ին: Այն, ըստ «Արցախէներգո»-ի, ադրբեջանական վերահսկողության տակ անցած Աղավնո-Բերձոր հատվածում է:

38 օր է՝ Արցախ սննդամթերք, դեղ ու այլ անհրաժեշտ ապրանքներ չեն մատակարարվում: Այսօրվանից կտորոններ են բաժանվում քաղաքացիներին: Արդեն շաբաթա վերջից մարդիկ այդ կտրոններով մեկ անձի համար մեկ լիտր ձեթ, մեկական կիլոգրամ բրինձ, մակարոն, հնդկաձավար ու շաքարավազ կարող են գնել մեկ ամսվա համար:

Անցած մեկ ամսվա ընթացքում Արցախը Հայաստանին կապող միակ ճանապարհով անցնում են միայն ռուս խաղաղապահների եւ Կարմիր խաչի միջազգային կոմիտեի մեքենաները: Երեկ կազմակերպության միջոցով Արցախից Հայաստան է տեղափոխվել եւս վեց հիվանդ: Մինչ այսօր Կարմիր խաչի միջնորդությամբ Արցախից Հայաստան է տեղափոխվել ընդհանուր 36 հիվանդ, այդ թվում՝ երկու օտարերկրացի:

Արցախից նաեւ ռուս խաղաղապահների միջոցով են օտարերկրացիներ դուրս եկել, նախօրեին պետնախարարը հայտնեց, որ կազմակերպել են շրջափակված Արցախում մնացած օտարերկրացիների մի մասի վերադարձը հայրենիք:

«Ձմեռային շրջան է, եւ մանավանդ Ստեփանակերտն ադապտացված է գազային տաքացուցիչներով, որպեսզի տները տաքացվեն. եւ տները, եւ հիմնարկները, եւ դպրոցները, հիվանդանոցները գազից են կախված, եւ դա շատ ավելի ծանրացրել է ժողովրդի վիճակը», - ասում է Ստեփանակերտի 60-ամյա բնակիչ Գայանե Առուստամյանը:

Նա մտածում է փայտե վառարան տեղադրելու մասին, եւ որպեսզի հետագայում էլ իր բնակարանի ջերմաստիճանը Ադրբեջանի քմահաճույքից կախված չլինի, պիտի արեւային կայան տեղադրի ու, իր խոսքով, ապահովի իր էներգետիկ անվտանգությունը. «Լեռնային գոտի ենք մենք, տներում ցուրտ է լինում, մանավանդ եթե տանն ունես ծերեր, իհարկե, ոչ ծերերն էլ են մրսում: Ցուրտ է, այո»:

Հոսանքի հովհարային անջատումներ, գազի բացակայություն, կտրոնով տրամադրվող մի քանի տեսակի մթերք միայն. կյանքն այսպիսին է Արցախում շրջափակման 44-րդ օրը:

Մարթան երեք երեխաների հետ անցնում է սուպերմարկետների դատարկ ցուցափեղկերի միջով, խանութից դատարկ էլ դուրս կգա. «Երեխաների հետ շատ դժվար է, կարելի է ասել՝ գնում ենք այն ամենը, ինչ որ նախատեսված է տալոնների մեջ. ավելի բան չկա գնելու, երեխաներն անընդհատ ուզում են, բացատրում ենք, որ ժամանակի հարց է»:

Անպտուղ որոնումների մեջ է նաեւ Լուսավարդ Զաքարյանը, չգիտի՝ հաշմանդամությամբ ապրող որդուն ինչ տանի. մթերք չկա, հիգիենիկ պարագաներն էլ անհետացան:

Կտրոնային համակարգից արցախցիները հիմնականում չեն դժգոհում, բրինձ, մակարոն, հնդկաձավար, ձեթ երաշխավորված տալիս են, մնում է դիմանալ հերթերին: Գայանե Առստամյանն ասում է՝ շատերի տներում պահածոներ կան՝ շատ հարմար փլավների համար, բանջարեղենի ամբողջ տեսականուն փոխարինում է դդումը, բազմազան մրգերին՝նուռը:

Ադրբեջանական կողմը շարունակում է փակ պահել Լաչինի միջանցքը, ճիշտ է՝ հիմա այդտեղ ադրբեջանական դրոշներն ու բնապահպանական պաստառներն ավելի շատ են, քան բուն ցուցարարները, բայց, միեւնույնն է, ճանապարհը բացվում է միայն ռուս խաղաղապահների մեքենաների համար, նաեւ երբեմն այդտեղով Կարմիր խաչի մեքենաներն են անցնում: Երեկ առավոտյան Ստեփանակերտից 11 հոգի հենց Կարմիր խաչի մեքենաներով շարժվել է դեպի Հայաստան՝ միանալու իրենց ընտանիքներին:

ՆԱԻՐԱ ՀՈՎՀԱՆՆԻՍՅԱՆ

ՕՐՎԱ ԽՃԱՆԿԱՐ

ԿԳՈՐԾՈՒՂՎԻ ԻՐ ՀԱՇՎԻՆ

ԱԺ նախագահ Ալեն Սիմոնյանը ՔՊ խմբակցության պատգամավոր Խաչատուր Սուքիասյանին կգործուղի Դուբայ:

Պատգամավորը փետրվարի 13-15-ը Դուբայում կմասնակցի Համաշխարհային կառավարության գագաթնաժողովին:

ArmLur.am-ը տեղեկացավ, որ պատգամավորը ԱՄԷ կմեկնի իր անձնական միջոցներով:

ՔՆՆԱՐԿՈՒՄ՝ ԵԼԻՍԵՅԱՆ ՊԱԼԱՏՈՒՄ

Ֆրանսիայի նախագահ Էմանուել Մակրոնը հունվարի 23-ին Ելիսեյան պալատում ընդունել է Ֆրանսիայի հայկական կազմակերպությունները համակարգող խորհրդի համանախագահներ Արա Թորանյանին եւ Մուրադ Փափազյանին:

Այս մասին տեղեկանում ենք Ֆրանսիայի հայկական կազմակերպությունների համակարգող խորհրդի մամուլի ծառայության տարածած հաղորդագրությունից:

Էմանուել Մակրոնն ու հայ համայնքի ներկայացուցիչները քննարկել են 2022 թվականի դեկտեմբերի 12-ից Լաչինի միջանցքի փակման հետեւանքով Արցախում ստեղծված իրավիճակը: Անդրադարձ է կատարվել նաեւ Հայաստանի տարածքային ամբողջականությանը սպառնացող սպառնալիքներին:

Արա Թորանյանն ու Մուրադ Փափազյանը ողջունել են Ֆրանսիայի նախագահի կողմից իրենց ցուցաբերած ուշադրությունը եւ հույս հայտնել, որ Ֆրանսիան առավել կակտիվացնի դերակատարումը Լեռնային Ղարաբաղի բնակչության պաշտպանության գործում:

ԱԴՐԲԵՋԱՆԸ ՋՂԱՋԳՎԵԼ Է

Եվրոպական միության խորհրդի որոշումից հետո, ըստ որի՝Հայաստանում քաղաքացիական առաքելություն կստեղծվի, պաշտոնական Բաքուն իրական հիստերիա է բարձրացրել: Այսպես, այդ երկրի Արտաքին գործերի նախարարությունը հույս է հայտնել, որ Եվրոպական միությունը չի խանգարի Հայաստանի ու Ադրբեջանի հարաբերությունների կարգավորման գործընթացին:

«Հայաստանում ԵՄ առաքելության տեղակայումն այնպես պետք է կազմակերպվի, որ որեւէ կերպ չխոչընդոտի Ադրբեջանի լեգիտիմ իրավունքներն ու չխաթարի երկուստեք վստահությունը»- ասված է Ադրեբաջնի ԱԳՆ-ի տարածած հայտարարության մեջ:

Պաշտոնական Բաքուն շտապել է նշել նաեւ, թե, իբրեւ, Հայաստանում ԵՄ առաքելության տեղակայումն ընթանում է՝ հայ-ադրբեջանական՝ Պարահայում տեղի ունեցած բանակցությունների ընթացքում ձեռք բերված պայմանավորվածություններին հակադրվելով:

Ադրբեջանի արտաքին գերատեսչությունն ընդգծել ու հույս է հայտնել նաեւ, որ ԵՄ նոր առաքելությունը նկատի կառնի անցյալի փորձը, ու Երեւանում ԵՄ դիտորդների ներկայությունը չի ջարաշահվի:

Հիշեցնենք, որ ԵՄ առաքելությունը Հայաստանի սահմանային գոտում պարեկային ծառայություն կիրականացնի: Առաքելության նախնական մանդատի ժամկետը երկու տարի է:

ԶՈՀՎԱԾ ԶԻՆԾԱՌԱՅՈՂՆԵՐ

ՍԵՊՏԵՄԲԵՐՅԱՆ ԱԳՐԵՍԻԱՅԻ ՀԵՏԵՎԱՆՔՆԵՐԸ

ՀՀ քննչական կոմիտեի զինվորական քննչական գլխավոր վարչությունում ամփոփվել են 2022 թ. սեպտեմբերի 13-14-ը Ադրբեջանի կողմից Հայաստանի Հանրապետության ինքնիշխան տարածքի նկատմամբ իրականացված ռազմական ագրեսիայի առթիվ իրականացվող քննության արդյունքները:

Ըստ այդմ՝ նշված ագրեսիայի ակտի առթիվ ՀՀ ՔԿ ՔՔԳ վարչությունում ՀՀ քրեական օրենսգրքի 140-րդ հոդվածի (Պատերազմ վարելու արգելված եղանակների կիրառմամբ պատերազմական հանցագործությունները) 1-ին մասի 2-րդ կետով եւ 149-րդ հոդվածի (Ագրեսիան) 1-ին մասով նախաձեռնված քրեական վարույթի նախաքննության ընթացքում ՀՀ Գեղարքունիքի, Վայոց ձորի եւ Սյունիքի մարզերի մեկուկես տասնյակ համայնքներում կատարվել է շուրջ 100 դեպքի վայրի զննություն:

Դրանց արդյունքում, ինչպես նաեւ մինչ այժմ կատարված քննության նախնական տվյալներով՝ պարզվել են համայնքներին պատճառված վնասները՝ ավերված կամ վնասված համայնքապետարանի շենք, հրշեջ փրկարարական ջոկատի շենք, դպրոց, 3 հյուրատուն, հանդիսությունների սրահ, 100-ից ավելի սեփական բնակելի տուն, անասնագոմեր, ջերմոց, մեկ տասնյակի հասնող քաղաքացիական ավտոմեքենաներ, ավտոճանապարհներ, այրված խոտածածկ եւ անտառածածկ մեծ տարածքներ, պտղատու այգի եւ այլն:

Բացի դրանից, վնասվել են նշված մարզերում տեղակայված 6 զորամաս, ռազմական օբյեկտներ եւ տեխնիկա, այդ թվում՝ բուժծառայության 2 ավտոմեքենա: Քրեական վարույթի շրջանակում նշանակվել են ավելի քան 7 տասնյակ դատա-պայթյունատեխնիկական, հրդեհատեխնիկական, շինարարատեխնիկական, ապրանքագիտական հանձնաժողովային համալիր, ինչպես նաեւ բուսաբանական փորձաքննություններ:

Նախաքննության ընթացքում տուժող են ճանաչվել եւ հարցաքննվել 600-ից ավել անձինք, հարցաքննվել են 1000-ից ավելի վկաներ, նշանակվել են 224 դիակի դատաբժշկական փորձաքննություններ, ինչպես նաեւ 98 դատագենետիկական եւ 350-ից ավել դատաբժշկական փորձաքննություններ:

Քննությամբ ձեռք բերված տվյալների համաձայն՝ Ադրբեջանի կողմից իրականացված ագրեսիայի հետեւանքով հայկական կողմից զոհվել է 224 անձ, այդ թվում՝ 3 քաղաքացիական անձ, անհայտ է 3 զինծառայողի գտնվելու վայրը:

ՀՀ ինքնիշխան տարածքի նկատմամբ իրականացված այդ ագրեսիայի ընթացքում Ադրբեջանի ԶՈՒ զինծառայողների կողմից կատարված տարբեր հանցագործությունների վերաբերյալ ՀՀ քննչական կոմիտեի ստորաբաժանումներում նախաձեռնվել է եւս 23 քրեական վարույթ, որոնք միացվել են մեկ վարույթում:

Մասնավորապես՝ քննության առարկա են՝

- ադրբեջանական զինծառայողների կողմից մարտադաշտում սպանված հայ զինծառայողների (այդ թվում՝ կին) դիակներն անարգելու դեպքերը,
- միջազգային իրավունքով պաշտպանությունից օգտվող, ռազմագերու կարգավիճակում գտնվող ՀՀ զինված ուժերի երկու տասնյակից ավելի զինծառայողների հանդեպ միջազգային մարդասիրական իրավունքի նորմերի լուրջ խախտումներ համարվող արարքներ կատարելու՝ ծաղրելու, սեռական բնույթի հայհոյանքներ եւ այլ վիրավորական արտահայտություններ հնչեցնելու եղանակով նրանց պատիվն ու արժանապատվությունը նվաստացնելու, խոշտանգելու եւ անմարդկային վերաբերմունք դրսեւորելու դեպքը,
- գերության մեջ գտնվող ՀՀ ԶՈՒ զինծառայողին բռնության ենթարկելու, խոշտանգելու եւ սպանելու փաստերը,
- տարածված տեսագրությամբ արձանագրված՝ ադրբեջանական ԶՈՒ-ի կողմից ռազմական ագրեսիայի ընթացքում մի խումբ գերի հայ զինծառայողների ուղղությամբ կրակահերթ արձակելու եւ սպանելու փաստը,
- հայ վիրավոր զինծառայողների նկատմամբ բռնություն կիրառելու մասին վկայող տեսաձայնագրությունը, որը, ինչպես պարզել է նախաքննությունը, կատարվել է 13.09.2022 թ. ՀՀ ՊՆ N զորամասի պահպանության ներքո գտնվող, սակայն ռազմական գործողության արդյունքում բռնազավթված մարտական դիրքի գետնատնակում:

Նախաքննությամբ նույնականացված՝ տեսանյութում պատկերված ռազմագերու կարգավիճակում գտնվող դեռեւս ողջ ՀՀ ԶՈՒ 2 զինծառայողների սպանված մարմինները հետագայում փոխանցվել են հայկական կողմին:

-Քննության առարկա են նաեւ Ադրբեջանական ԶՈՒ զինծառայողների կողմից ՀՀ Վայոց ձորի մարզի Ջերմուկ եւ Սյունիքի մարզի Գորիայք համայնքների, Գեղարքունիքի մարզի մի շարք բնակիչներին պատկանող խոշոր չափերով գույքերը՝ կացարանները, անասունները եւ ավտոմեքենաները, ՀՀ ՊՆ մի շարք զորամասերի հաշվեկշռում գտնվող առանձնապես խոշոր չափերով գույքերը, ռազմական անհրաժեշտությամբ չպայմանավորված, ապօրինի, կամայական ոչնչացնելու եւ հափշտակելու դեպքերը:

-Քննության առարկա է նաեւ հակառակորդի կողմից գրավված մարտական դիրքերից զոհված հայ զինծառայողների դիերը դուրս բերելու նպատակով կազմված խմբի 4 հայ անդամներին 15.09.2022 թ. ետ վերադառնալ չթույլատրելու դեպքը (բանակցություններից հետո վերջիններս վերադարձվեցին հայկական կողմին):

Քրեական միասնական վարույթի շրջանակում շարունակվում են հսկայածավալ քննչական, վարութային, օպերատիվ-հետախուզական միջոցառումներ հանցագործություն կատարած Ադրբեջանի ԶՈՒ զինծառայողների նույնականացման, նրանց նկատմամբ քրեական հետապնդում հարուցելու, կատարված ռազմական հանցագործությունների ողջ պատկերն ամբողջացնելու նպատակով:

Բացի վերոնշյալը, չնայած ՀՀ տարածքային ամբողջականության դեմ իրականացված նշված ռազմական ագրեսիայի ընթացքում ՀՀ զինված ուժերի կողմից կազմակերպված ուժեղ դիմադրության ցուցաբերմանը, ՀՀ ՔԿ ՔՔԳ վարչությունում քննության առարկա են դարձվել նաեւ ՀՀ զինված ուժերի որոշ ներկայացուցիչների առանձին գործողություններ՝ կապված մարտական ծառայություն կրելու կանոնները խախտելու, կյանքի կամ առողջության համար վտանգավոր վիճակում գտնվող եւ ինքնապահպանության միջոցներ ձեռնարկելու հնարավորությունից զրկված անձին անօգնական վիճակում թողնելու, մարտի պարագայում ծառայողական պարտականությունները չկատարելու, զինծառայությունից ժամանակավորապես խուսափելու նպատակով ժամանակին ծառայության վայր չներկայանալու, ծառայողական ռազմական գույքը կորցնելու եւ այլնի հետ:

Նման դեպքերի առթիվ նախաձեռնվել է 22 քրեական վարույթ, որոնց շրջանակներում մեղադրանքներ են ներկայացվել 16 զինծառայողների, որոնցից 6-ի նկատմամբ խափանման միջոց է ընտրվել կալանքը, իսկ մնացածի նկատմամբ՝ բացակայելու արգելքը: Նշված քրեական վարույթներից 6-ը մեղադրական եզրակացությամբ ուղարկվել է դատարան, մյուսներով նախաքննությունը շարունակվում է:

ՔՐԵԱԿԱՆ ԳՈՐԾ

ԱՌԱՋԻՆ ԴԱՏԱԿԱՆ ՆԻՍՏ

Հակակոռուպցիոն դատարանում երեկ տեղի ունեցավ ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանի, ՀՀ ԶՈՒ ԳՇ պետ Արտակ Դավթյանի, ԶՈՒ ԳՇ պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանի, Պատրոն Դավո մականունով հայտնի, զենքի մատակարարմամբ զբաղվող գործարար Դավիթ Գալստյանի գործով նիստը: Զինված ուժերի գլխավոր շտաբի նախկին պետ Արտակ Դավթյանին հարց ուղղեցինք, թե ինչով է զբաղվում նա այս պահին, իշխանություններից առաջարկ չի ստացել արդյոք նոր պաշտոնի գնալու համար եւ, առհասարակ, որպես ԳՇ նախկին պետ, իր մեղքի բաժինը չի տեսնում արդյոք 15 զինծառայողների մահվան դեպքով, քանի որ իր ղեկավարման ժամանակ են զինվորներին կացարաններ հատկացրել:

Ինչպես հայտնի է, ԱԱԾ քննչական դեպարտամենտում հարուցվել էր քրեական գործ՝ ռազմամթերքի ձեռք բերման գործընթացում ենթադրյալ չարաշահումների վերաբերյալ: Քրեական գործի շրջանակներում մեղադրանք է առաջադրվել յոթ անձի, այդ թվում՝ ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանին, ՀՀ ԶՈՒ ԳՇ պետ Արտակ Դավթյանին, ԶՈՒ ԳՇ պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանին, Պատրոն Դավո մականունով հայտնի, զենքի մատակարարմամբ զբաղվող գործարար Դավիթ Գալստյանին:

Քրեական գործով այս պահին «Երեւան-Կենտրոն» քրեակատարողական հիմարկում՝ «ԿԳԲ-ի պադվալում» են գտնվում ՊՆ նախկին նախարար Դավիթ Տոնոյանը, ԶՈՒ ԳՇ պետի նախկին տեղակալ Ստեփան Գալստյանը, Հայաստանի Հանրապետության զինված ուժերի ավիացիայի վարչության նախկին պետ, գեներալ-մայոր Ավետիք Մուրադյանը, իսկ մյուս անձինք ազատության մեջ են: Երեկ Հակակոռուպցիոն դատարանում վերոնշյալ պաշտոնատար անձանց մասով առաջին դատական նիստն էր:

ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

ԿԱՆ ՏՈՒԺԱԾՆԵՐ

Հունվարի 23-ին՝ ժամը 23:53-ին, Արարատի մարզային ճգնաժամային կառավարման կենտրոն ահազանգ է ստացվել, որ Մ-2 ավտոճանապարհին՝ Մխչյան գյուղի մոտակայքում, տեղի է ունեցել ճՏՊ. կան տուժածներ:

ՆԳՆ փրկարար ծառայությունից հայտնում են, որ դեպքի վայր է մեկնել ՆԳՆ ՓԾ մարզային փրկարարական վարչության հրշեջ-փրկարարական ջոկատից մեկ մարտական հաշվարկ:

Պարզվել է, որ Երասխ-Երեւան ավտոճանապարհի մոտ 50-րդ կմ-ին բախվել են Mercedes-Benz (վարորդ՝ Հ. Գ.՝ ծնված 1996 թ.) եւ Lada Priora (վարորդ՝ Գ. Ա.՝ ծնված 1999 թ.) մակնիշների ավտոմեքենաները:

Մինչ փրկարարների կանչի վայր հասնելը Lada Priora մակնիշի ավտոմեքենայի ուղեւոր Մ. Պ.-ն (ծնված 1959 թ.) հոսպիտալացվել է Երեւան քաղաքի «Էրեբունի» ԲԿ:

Փրկարարները հոսանքազրկել են ավտոմեքենաները եւ փակել գազի բալոնների փականները:

● *Ըստ ոստիկանության տվյալների՝ հունվարի 23-ից 24-ը Հայաստանի Հանրապետությունում բացահայտվել է հանցագործության 56 դեպք, որոնցից 3-ը՝ նախկինում կատարված:*

ՀԱՍԱՐԱԿՈՒԹՅՈՒՆ

ՄԱՐԶ

ՄԵՂԱԴՐԱՆՔ ՉԻ ԱՌԱՔԱԴՐՎԵԼ

2020 թվականի ամռանը Իջեւանի գինու, կոնյակի գործարանը, առանց շինթույլտվության եւ շրջակա միջավայրի վրա ազդեցության գնահատականի, (ՇՄԱԳ) գործարանի հարեւանությամբ՝ Աղստեւ գետի հունում եւ ափին, կատարել է մեծ ծավալի շինարարական աշխատանքներ. 700-800 մետր երկարությամբ գետի հունն ավերվել է, 1870 խորանարդ մետր ծավալով գետափի ժայռը վերացել է, Աղստեւի ափին կառուցվել է մեծ երկարությամբ բետոնե պատ, որի հետեւանքով Իջեւանի դենդրոպարկի ջրառն ավերվել է: Այդ ժամանակից մինչեւ այսօր՝ավելի քան երկուսուկես տարի, Իջեւանի դենդրոպարկն Աղստեւ գետից ոռոգման ջուր չի ստանում, Իջեւանի դենդրապարկում շուրջ 60 տարում տնկված հազվագյուտ ծառերի եւ թփերի կեսը չորացել է, մնացած մասն էլ չորացման վտանգի տակ է: Դենդրոպարկին եւ Աղստեւ գետին պատճառվել է միլիոնավոր դոլարների նյութական վնաս: Բնապահպանական խախտումների համար Բնապահպանության եւ ընդերքի տեսչական մարմնի Տավուշի մարզային բաժինը Իջեւանի գինու, կոնյակի գործարանին տուգանել է 216 հազար դրամի, նաեւ 350 հազար դրամի չափով, սակայն հայրենի բնությունը ավերելը չի խանգարել, որ 2021 թվականի նոյեմբերի 4-ին Իջեւանի գինու, կոնյակի գործարանի սեփականատեր Էմին Եղիազարյանը պարգեւատրվի ՀԱԲ-ի «Ասպետ Մեծն Տիգրան» շքանշանով: Գրավոր դիմել եմ ՀՀ քննչական կոմիտեի նախագահ Արգիշտի Քյարամյանին՝ հարցնելով, թե Աղստեւ գետի եւ Իջեւանի դենդրոպարկի ջրառն ավերելու հետ կապված քրեական գործն ինչ ընթացք ունի, ով է այդ գործով ներգրավված որպես մեղադրյալ: Քննչական կոմիտեի պատասխանում նշված է. «Տավուշի մարզի Աղստեւ գետի մաս հանդիսացող ջրային հողը առանց Հայաստանի Հանրապետության ջրային կոմիտեի եզրակացության վարձակալությամբ Իջեւանի գինու եւ կոնյակի գործարանին հանձնելու եւ ապօրինի շինարարություն կատարելու դեպքի առթիվ 2021 թվականի հոկտեմբերի 15-ին (08.04.2003 թվականին ընդունված եւ 01.07.2022 թվականին ուժը կորցրած) ՀՀ քրեական օրենսգրքի 308-րդ հոդվածի 1-ին մասով եւ Հայաստանի Հանրապետության քրեական օրենսգրքի 290-րդ հոդվածի 1-ին մասով նախատեսված հանցագործության հատկանիշներով նախաձեռնվել է քրեական վարույթ: Նախաքննության այս փուլում որեւէ մեկի նկատմամբ հանրային քրեական հետապնդում հարուցված չէ»:

Ռ. ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

ԱՐՑԱԽԻ ԱԳՆ

ԱԴՐԲԵՋԱՆԻ ՊԱՐՏԱՎՈՐՈՒԹՅՈՒՆԸ՝ ՄԻՋԱՆՑՔԻ ՆԿԱՏՄԱՄԲ

Արցախի շրջափակումը ոչ միայն հանգեցնում է առաջին անհրաժեշտության ապրանքների եւ դեղորայքի սղության, այլեւ հազարավոր մարդկանց զրկում է աշխատանքից եւ ապրուստի միջոցներից: Այս մասին հայտարարություն է տարածել Արցախի Հանրապետության արտաքին գործերի նախարարությունը:



«Վերջին շրջանում ադրբեջանական իշխանություններն ավելի հաճախ են դիմում 2020 թվականի նոյեմբերի 9-ի Եռակողմ հայտարարության՝ Լաչինի միջանցքի գործունեությանը վերաբերող 6-րդ կետի կամայական մեկնաբանմանը: Սեփական քաղաքական օրակարգն առաջ մղելու նպատակով Ադրբեջանը, փակելով Արցախը Հայաստանին ու արտաքին աշխարհին կապող միակ ճանապարհը, արդեն ավելի քան 40 օր պատանդ է պահում Արցախի ողջ բնակչությանը եւ ստեղծում լուրջ հումանիտար ճգնաժամ:

Ընդ որում՝ Ադրբեջանը դիմում է տարատեսակ շահարկումների՝ փորձելով քողարկել Արցախի ժողովրդի նկատմամբ իր անմարդկային քաղաքականությունը: Մասնավորապես, ռուս խաղաղապահներին եւ Կարմիր խաչի միջազգային կոմիտեին պատկանող տրանսպորտային միջոցների երթեւեկության մասին տվյալները ադրբեջանական իշխանությունները ներկայացնում են որպես հումանիտար ճգնաժամի եւ շրջափակման բացակայության ապացույց, սակայն միջազգային հանրությանը մոլորեցնելուն միտված ադրբեջանական կեղծարարությունները հերքվում են փաստերով: Նախ՝ Լաչինի միջանցքի փակման 43 օրվա ընթացքում ավելի քիչ տրանսպորտային միջոցներ են անցել, քան մինչեւ շրջափակումը՝ մեկ օրվա ընթացքում: Այդ բոլոր տրանսպորտային միջոցները պատկանում էին կամ ԿԽՄԿ-ին, կամ ռուս խաղաղապահներին: Արցախի բնակիչների տրանսպորտային միջոցները չեն անցել միջանցքով: Երկրորդ՝ Լաչինի միջանցքի արգելափակման հետեւանքով դադարեցվել է երկու ուղղություններով ուղեւորաշրջանառությունը: Անգամ ռուս խաղաղապահների՝ Հայաստանից Արցախ երեխաներ տեղափոխող մեքենան է կանգնեցվել, իսկ ուղեւորները ադրբեջանցիների կողմից ենթարկվել են նպատակաուղղված հոգեբանական ահաբեկման: Երրորդ՝ ամբողջությամբ դադարեցվել է սպառողական ապրանքների ներմուծումը, որը կազմում էր օրական ավելի քան 400 տոննա:

Արցախի շրջափակումը ոչ միայն հանգեցնում է առաջին անհրաժեշտության ապրանքների եւ դեղորայքի սղության, այլեւ հազարավոր մարդկանց զրկում է աշխատանքից եւ ապրուստի միջոցներից: Ավելին՝ բացի Արցախի ցամաքային շրջափակումից, Ադրբեջանը նաեւ էներգետիկ շրջափակում է իրականացնում՝ նպատակ ունենալով էլ ավելի վատթարացնել հումանիտար իրավիճակը: Ադրբեջանը շարունակում է դիտավորյալ խոչընդոտել Արցախի գազամատակարարումը եւ Հայաստանից եկող Գորիս-Ստեփանակերտ միակ բարձրավոլտ գծի՝ իրենց վերահսկողության տակ գտնվող հատվածի վերականգնումը, որտեղ հունվարի 9-ին վթար էր տեղի ունեցել:

Ադրբեջանի պնդումը՝ Լաչինի միջանցքով անցնող տրանսպորտային միջոցները կանգնեցնելու եւ բեռների զննում անցկացնելու իր իրավունքի մասին, բացարձակապես անհիմն է: Եռակողմ հայտարարության մեջ բացակայում է բեռների փոխադրման որեւէ սահմանափակում՝ ըստ դրանց բնույթի, նշանակության կամ կիրառման: Լաչինի միջանցքի նկատմամբ Ադրբեջանն ունի միայն մեկ պարտավորություն՝ ոչ մի կերպ չխոչընդոտել տեղաշարժը:

Եռակողմ հայտարարության դրույթները միակողմանիորեն վերանայելու եւ միջազգայնորեն ճանաչված կարգավիճակ ունեցող Լաչինի միջանցքը Ադրբեջանի կողմից վերահսկվող եւ բացառապես մարդասիրական փոխադրումների համար օգտագործվող ճանապարհի վերածելու Բաքվի փորձերն ապօրինի են եւ պետք է մերժվեն:

Եռակողմ հայտարարության տակ Ադրբեջանի նախագահի ստորագրությունը Ադրբեջանի ակնհայտ համաձայնությունն է ընդունել Ռուսաստանի Դաշնության խաղաղապահ զորակազմի բացառիկ վերահսկողությունը Լաչինի միջանցքի նկատմամբ:

ԴԻԼԻՋԱՆ

ՀԱՄԱՅՆՔԱՊԵՏԱՐԱՆԻ ՏԱՐՕՐԻՆԱԿ ՑԱՎԱԿՑՈՒԹՅՈՒՆԸ

Հունվարի 19-ին Գեղարքունիքի Ազատ գյուղում հրդեհի հետեւանքով մահացած 15 զինվորներից 2-ը Տավուշի մարզից էին.

Նրանք են Դիլիջան քաղաքի բնակիչ Գոռ Մարտիրոսյանը եւ Իջեւան համայնքի Աչաջուր գյուղի բնակիչ Պավլիկ Աբազյանը: Դեպքից բավականին ժամանակ է անցել, սակայն Տավուշի մարզպետարանը ոչ մարզպետարանի ինտերնետային կայքում, ոչ էլ մարզպետարանի ֆեյսբուքյան էջում ցավակցություն չի հայտնել այդ առթիվ: Իջեւանի համայնքապետարանի եւ Դիլիջանի համայնքապետարանի ինտերնետային կայքերում իրենց համայնքների բնակիչների մահվան վերաբերյալ տեքստեր չեն տեղադրվել. դրանք տեղադրվել են այդ համայնքապետարանների ֆեյսբուքյան էջերում: Տարօրինակ է հունվարի 21-ի Դիլիջանի համայնքապետարանի ֆեյսբուքյան էջում դրված եւ հանրապետության մի շարք լրավամիջոցներին ուղարկված տեքստի բովանդակությունը: Այնտեղ նշված է՝ցավով տեղեկացել են, որ ԴՆԹ հետազոտության արդյունքում հաստատվել է հունվարի 19-ին Ազատ գյուղում գտնվող ինժեներասակրավորային վաշտի կացարանում բռնկված հրդեհի հետեւանքով մահացած դիլիջանցի Գոռ Մարտիրոսյանի ինքնությունը, ցավակցություն է հայտնվում Գոռի հարազատներին, մտերիմներին եւ ընկերներին. «Խորապես հարգելով զոհվածի հարազատների վիշտը՝ մեր էջում Գոռ Մարտիրոսյանի մասին կհրապարակենք ճշտված տեղեկատվություն միայն ծնողների թույլտվությամբ»: ԴՆԹ հետազոտության արդյունքում հաստատվել է, որ մահացածներից մեկը Գոռ Ստփանյանն է, էլ ի՞նչը պետք է ճշտվի, համայնքապետարանի ինտերնետային կայքում ցավակցություն հայտնելու համար ինչո՞ւ պետք է Գոռ Մարտիրոսյանի հարազատների թույլտվությունը, «Ֆեյսբուք»-ում ցավակցություն հայտնելու համար համայնքապետարանը նման թույլտվություն Գոռի հարազատներից ստացե՞լ է:

ՈՍԿԱՆ ՍԱՐԳՍՅԱՆ
Տավուշ

● Անցած 1 օրվա ընթացքում Հայաստանի Հանրապետությունում արձանագրվել է 10 ՃՏՊ. 10 մարդ ստացել է տարբեր աստիճանի մարմնական վնասվածքներ:

ԿԵՂԾ ՏՎՅԱԼՆԵՐ

ՉԻ ՎՃԱՐՎԵԼ 66 ՄԼՆ ԴՐԱՄ

«ԷԼ-ԱՆ» սահմանափակ պատասխանատվությամբ ընկերության (այսուհետ՝ Ընկերություն) տնօրեն Ն.Ն.-ն, առանձնապես խոշոր չափերով հարկ չվճարելու նպատակով Ընկերության գործունեության վերաբերյալ հարկային մարմին ներկայացված հարկային հաշվարկներում մտցրել է ակնհայտ կեղծ տվյալներ, արդյունքում պետական բյուջե չի վճարել 66 մլն 30 հազար 178 դրամ հարկ:

Մասնավորապես՝ քրեական գործի նախաքննությամբ պարզվել է, որ «ԷԼ-ԱՆ» ընկերության տնօրեն Ն.Ն.-ն Ընկերության կողմից կառուցապատված եւ 2018 թվականի մայիսից մինչեւ 2019 թվականի ապրիլ ամիսների ընթացքում օտարված Կիեւյան 2/9 հասցեի բազմաբնակարան շենքի 7 բնակարանների արժեքները՝ պակաս, իսկ ընկերության իրականացրած ծախսերն ավել է հայտարարագրել հարկային մարմին ներկայացված հաշվարկներում:

Բացի այդ, Ընկերության 2018 եւ 2019 թվականների համախառն եկամտից նվազեցվող ծախսերը կազմել են 74 մլն 818 հազար 704 դրամ եւ 205 հազար 694 դրամ, սակայն, Ն.Ն.-ն համախառն եկամտից նվազեցվող ծախսերը ներկայացրել է 2018 թվականի շահութահարկի հաշվարկով՝ 131 մլն 30 հազար 745 դրամ, եւ 2019 թվականի շահութահարկի հաշվարկով՝ 99 մլն 845 հազար 150 դրամ:

Արդյունքում Ն.Ն.-ն, խախտելով ՀՀ հարկային օրենսգրքի մի շարք հոդվածներ, Ընկերության հարկվող շահույթը նշված ժամանակահատվածում պակաս է ցույց տվել՝ 2018 թվականին պետական բյուջե չվճարելով 26 մլն 523 հազար 352 դրամ, իսկ 2019 թվականին՝ 22 մլն 76 հազար 886 դրամ. 2018 թվականի մայիս, օգոստոս, հոկտեմբեր, նոյեմբեր, դեկտեմբեր, 2019 թվականի ապրիլ ամիսների համար չի հաշվարկել եւ պետական բյուջե չի վճարել 17 մլն 429 հազար 940 դրամ ավելացված արժեքի հարկ:

Հաշվի առնելով վերը նշված հանգամանքը՝ ՊԵԿ քննչական վարչությունում (այժմ՝ Քննչական կոմիտեի տնտեսական հանցագործությունների եւ մաքսանենգությունների քննության գլխավոր վարչություն), 18.04.2003 թվականին ընդունված ՀՀ քրեական օրենսգրքի 205-րդ հոդվածի 2-րդ մասով (հարկերը, տուրքերը կամ պարտադիր այլ վճարումները վճարելուց չարամտորեն խուսափելը, որը կատարվել է առանձնապես խոշոր չափերով), Ն.Ն.-ին 2022 թվականի հունիսի 27-ին առաջադրվել է մեղադրանք:

Որպես խափանման միջոց է ընտրվել ստորագրությունը՝ չհեռանալու մասին:

Դատախազական հսկողության ներքո կատարվում են անհրաժեշտ քննչական գործողություններ, այդ թվում՝ նշանակվել է դատահաշվապահական փորձաքննություն:

«ԱԿԲԱ» բանկ

ԱՐԵՎԱՅԻՆ ԿԱՅԱՆ Է ԿԱՌՈՒՑՎԵԼ

Իջեւանի «ՍՕՍ մանկական գյուղ»-ի տներում բնակվում են առանց ծնողական խնամքի մնացած երեխաները: Այստեղ նրանք ստանում են խնամք, դաստիարակություն եւ կրթություն ճիշտ, ինչպես ընտանիքում: Բարեգործական ծրագիրը նաեւ ամեն ինչ անում է, որպեսզի հնարավորության դեպքում երեխաները վերամիավորվեն կենսաբանական ընտանիքին: Այսուհետեւ Իջեւանի «ՍՕՍ մանկական գյուղ»-ը, շնորհիվ իր գործընկերներ «Ակբա» բանկի ու բանկի Visa ԲԱՐԵՐԱՐ քարտապանների, կունենա էներգիայի այլընտրանքային աղբյուր: 50կՎտ հզորությամբ արեւային կայանը գյուղը կթոթափի ֆինանսական մեծ բեռից՝ ապահովելով երկարաժամկետ խնայողություններ:

Սա ծրագրի 2-րդ փուլն է. դեռ 2018-ին «Ակբա»-ն այստեղ նույն Visa ԲԱՐԵՐԱՐ ծրագրով, որն իրականացվում է «Հայաստան» համահայկական հիմնադրամի հետ, տեղադրել էր 14 արեւային ջրատաքացուցիչ՝ ամբողջությամբ լուծելով ջրի տաքացման խնդիրը: «Շարունակելու ենք Visa ԲԱՐԵՐԱՐ քարտի ծավալների ավելացմանն ուղղված աշխատանքները, որ մեր հաճախորդներից հնարավորինս շատ մարդիկ դառնան բարերար: Ընդ որում, բարերար դառնալու համար ընդամենը պետք է վճարումները կատարել Visa ԲԱՐԵՐԱՐ քարտով, մնացածը մենք ինքներս ենք կատարում՝ մեր շահույթի հաշվին: «ՍՕՍ-մանկական գյուղ»-ում իրականացված այս ծրագիրը կարեւոր էր մեզ համար նաեւ, որ, բացի խնայողություններից, այստեղ ապրող շուրջ 100 երեխա իրենց կյանքում ու կենցաղում տեսնեն, թե վերականգնվող էներգիան որքան կարեւոր է, ու մենք հուսով ենք, որ իրենք էլ երբ մեծանան, կլինեն այն ջատագովներից մեկը, որ մեր երկիրը մաքուր էներգիայով սնվի, ու շրջակա միջավայրը չաղտոտենք կամ, որքան հնարավոր է, քիչ աղտոտենք»,- նշել է «Ակբա» բանկի բիզնես գործառույթների համակարգման գծով գլխավոր գործադիր տնօրեն Արսեն Մելքոնյանը:

«Արեւային էներգիայի նման ծրագրերը դեռ 5 տարի առաջ տարածված չէին, եւ հիմնադրամն առաջիններից էր, որ սկսեց խթանել արեւային էներգիայի եւ, ընդհանրապես, վերականգնվող էներգիայի զարգացումը Հայաստանում, եւ այսօր տեսնում եք, թե ինչ թափ է ստացել թե՛ արեւային պանելների, թե՛ ջրատաքացուցիչների օգտագործումն ամբողջ երկրով մեկ, եւ կարծում եմ, որ «Հայաստան» համահայկական հիմնադրամը, «Ակբա» բանկի հետ գործակցության շնորհիվ, բավականին մեծ ներդրում ունի Հայաստանում ու Արցախում արեւային էներգիայի զարգացման գործում»,- նշել է «Հայաստան» համահայկական հիմնադրամի գործադիր տնօրեն Հայկակ Արշամյանը: «Շատ կարեւոր են նման նախաձեռնությունները, որ կարողանանք մեր ծախսերը տնտեսել ու տնտեսած գումարները փորձենք օգտագործել՝ ի շահ երեխաների եւ իրենց զարգացման»,- նշել է «ՍՕՍ մանկական գյուղեր» ՀԲՀ ազգային տնօրեն Սպարտակ Սարգսյանը: «ՍՕՍ մանկական գյուղ»-ի գործընկեր «Ակբա» բանկն այս ծրագիրն իրականացնում է Visa ԲԱՐԵՐԱՐ քարտապանների աջակցությամբ: Դեռ 2012-ին «Ակբա»-ն «Հայաստան» համահայկական հիմնադրամի հետ Հայաստանում առաջին անգամ թողարկեց բարեգործական Visa ԲԱՐԵՐԱՐ քարտը: Ծրագրի շրջանակում բանկը հիմնադրամի հատուկ հաշվեհամարին իր շահույթից փոխանցում է Visa ԲԱՐԵՐԱՐ քարտով կատարված բոլոր վճարային գործարքների գումարի 0.1%-ը, ինչպես նաեւ սպասարկման վարձի 50%-ը: Քարտապանները պարզապես կատարում են գործարքներ, որից ձեւավորվող շահույթը բանկն իր սեփական միջոցների հաշվին ուղղում է բարեգործության:

ԼՈՒՐԵՐ

ԳԱՐՆԱՆԱՅԻՆ ԱՐՁԱԿՈՒՐԴՆԵՐ

Կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարի հրամանով հաստատված՝ հանրակրթական հիմնական ընդհանուր, մասնագիտացված եւ հատուկ պետական ծրագրեր իրականացնող ուսումնական հաստատությունների 2022-2023 ուսումնական տարիների օրինակելի ուսումնական պլաններում սահմանվել են դպրոցականների արձակուրդների օրերը:

Ըստ այդմ՝ առաջին դասարանցիների գարնանային արձակուրդները տրամադրվում են 2023 թ. մարտի 20-ից ապրիլի 2-ը ներառյալ:

Երկրորդ դասարանցիների գարնանային արձակուրդները տրամադրվում են 2023 թ. մարտի 27-ից ապրիլի 2-ը ներառյալ:

3-12-րդ դասարանների գարնանային արձակուրդները տրամադրվում են 2023 թ. մարտի 27-ից ապրիլի 2-ը ներառյալ:

Ըստ ուսպլանի՝ ԿԳՄՍ նախարարությունն անհաղթահարելի ուժի առաջացման դեպքում (եղանակային անբարենպաստ պայմաններ, սուր վարակիչ հիվանդությունների տարածում, տարերային աղետ եւ այլն) կարող է սահմանել լրացուցիչ արձակուրդ՝ կատարելով փոփոխություններ ուսումնական պարապմունքների եւ սովորողների համար սահմանված արձակուրդների ժամանակացույցներում:

Այդ փոփոխությունները կարող է կատարել նաեւ ուսհաստատությունը՝ բաց թողնված ժամերը մինչեւ ուսումնական պարապմունքների ավարտը լրացնելու կամ ուսումնական պարապմունքները հեռավար եղանակով կազմակերպելու մասին լիազոր մարմնին տեղեկացնելու պայմանով:

Սահմանվել է նաեւ, որ 2022-2023 ուստարվա պարապմունքներն ավարտվում են 2023 թ. մայիսի 26-ին՝ 5-օրյա աշխատանքային շաբաթվա, եւ մայիսի 27-ին՝ 6-օրյա աշխատանքային շաբաթվա դեպքում՝ ապահովելով առնվազն 30 ուսումնական շաբաթ՝ առաջին, 32՝ երկրորդ, եւ 34՝ երրորդից տասներկուերորդ դասարանների համար:

ՍՊԱՍԱՐԿՈՒՄ՝ ԱՌԱՆՑ ՄԻՋՆՈՐԴԱՎՃԱՐԻ

Այսուհետեւ Արցախի Հանրապետությունում գործունեություն ծավալող յուրաքանչյուր բանկ Արցախում գործող մյուս բանկերի քարտերը սպասարկելու է առանց միջնորդավճար գանձելու, իսկ դրա՝ տեխնիկապես անհնարինության դեպքում՝ գանձված միջնորդավճարը քարտապանին կվերադարձվի գործարքի հաջորդ օրը:

Արձագանքելով բնակչության կողմից բարձրացված խնդրին եւ հաշվի առնելով ստեղծված իրավիճակը՝ Արցախի օպերատիվ շտաբը հարցը քննարկել էր ՀՀ կենտրոնական բանկի հետ, որից հետո Արցախում գործող բոլոր բանկերին առաջարկվել էր վերոնշյալ կարգավորումը: Բոլոր բանկերն իրենց համաձայնությունն են տվել եւ պատրաստակամություն են հայտնել ապահովել ընթացակարգի իրականացումը: Այս մասին հայտնում է ԱՀ օպերատիվ շտաբը:

● «Ժողովուրդ» օրաթերթում եւ Armlur.am կայքում գովազդ, հայտարարություն, հաշվետվություն, ծանուցում տեղադրելու համար զանգահարել 094-455-456 հեռախոսահամարով:

ԱՐՁԱԳԱՆՔ

ՍԻԲԻԼԸ՝ ՍՏԱՄԲՈՒԼԻ ՀԱՄԵՐԳԻ ՄԱՍԻՆ

Հունվարի 18-ին Ստամբուլի ամենահայտնի եւ մեծ համերգասրահներից մեկում կայացավ ողլսահայ սիրված երգչուհի Սիբիլի երկար սպասված մենահամերգը: Երգչուհին ArmLur.am-ի հետ զրույցում պատմել է համերգի մանրամասների եւ տպավորությունների մասին:

«Եկարարատեւ դադարից հետո որոշեցի Կ. Պոլսում հանդես գալ մենահամերգով: Համերգն ինձ համար շատ սպասված էր եւ անհամբերությամբ էի սպասում այդ օրվան. իհարկե, այն անցավ շատ լավ, բարձր տրամադրությամբ: Ամենակարեւորը գոհը էին եւ երաժիշտները, եւ հանդիսատեսը: Բեմում մոտ 45 երաժիշտ կար, ինչպես նաեւ ունեի յուրահատուկ հյուրեր՝ Հայաստանից ժամանած: Հատուկ համերգի համար Հայաստանից եկել էին Beautified Project rock խմբի հիմնադիր Անդրե Սիմոնյանը, Հրանտ Կիզմեչյանի ղեկավարությամբ «Հրանտ Դինք» վարժարանի հայկական երգչախումբի սաները, համշենցի հայտնի երգչուհի Այսենուր Կոլիվարը, սիմֆոնիկ եւ փոփ նվագախումբը, եւ մաեստրո Սիբիլ Արսենյանի հետ 20 հայկական երգ հրամցրեցինք հանդիսատեսին»,-նշեց երգչուհին: Վերջինիս խոսքով՝ մենահամերգի մասին շատ դրական արձագանքներ է լսել ոչ միայն հայ համայնքի կողմից, այլ նաեւ թուրքերի. «Հունվարի 18-ին՝ համերգի ընթացքում, հնչել է նաեւ նոր երգ: Համո Սահյանի խոսքերով «Հրանտ Դինք» վարժարանի երաժշտության ուսուցիչ Հրանտ Իզմեջիյանի եւ երգչախմբի հետ միասին երգեցինք: Եթե հովանավոր լինի, ապա կուզենամ գործիքավորել այդ երգը: Այս ամենի հետ հանդերձ ունեմ նաեւ նոր երգեր, որոնք պետք է կյանքի կոչվեն Հայաստանում»:

Իսկ թե երբ է պատրաստվում այցելել Հայաստան, Սիբիլն ասաց, որ դեռ անորոշ է: Երգչուհին մեզ հետ զրույցում անդրադարձավ նաեւ Հայաստանում եւ Արցախում տեղի ունեցող իրադարձություններին՝նշելով, որ մշտապես հետեւում է, թե ինչ է կատարվում հատկապես Արցախի շուրջ: «Առաջին՝ կուզենայի նշել, որ շատ եմ ցավում մեր նախ 15 զինվորների կորստի համար, շատ եմ ցավում: Արցախի համար Աստծուն աղոթում եմ, որ լույս բացվի: Ամեն օր դրական լուրի ենք սպասում: 2023 թվականին բոլոր ցավերը թող կորչեն, ու բարին թող հաղթի»,-հավելեց նա:

ԼԻԴԱ ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ՋԵՐՄՈՒԹՅՈՒՆ, ՈՒԺԵՂ ՑԱՎ

Դերասանուհի, բլոգեր Լիանա Վանոյանը վատառողջ է: Այս մասին դերասանուհին «Ինստագրամ»-ի «Սթորի» բաժնում տեղեկացրել է իր հետեւորդներին: Ըստ երեւույթին, դերասանուհին վարակվել է սուր շնչառական հիվանդությունով, դրա հետ մեկտեղ, ինչպես նա է նշել, ունի ատամնացավ:

Ի դեպ, նշենք, որ Լիանան բավականին ակտիվ եւ մտահոգ հրապարակումներ է անում Արցախի եւ Հայաստանի ներկա վիճակի մասին:

Լիանա Վանոյանն անդրադարձել էր նաեւ Գեղարքունիքի մարզի Ազատ գյուղի տարածքում տեղակայված զորամասում բռնկված հրդեհին՝ հրապարակելով լուսանկարները դեպքի վայրից:

«15 կյանք, 15 ընտանիք: Ցավակցում եմ հարազատներին: Սրանք սա էլ կմարսեն. մարդկային կյանք կործանելու փորձ ունեն»:

2023 Թ.–Ի ԹՐԵՆԴԱՅԻՆ ԳՈՒՅՆԵՐԸ ⇨

2023 թվականի ձմեռային նորաձեւության ներկապնակը ներառում է թե՛ վառ, թե՛ հանգիստ գույներ:

Իսկ ինչպե՞ս ընտրել երանգները, ի՞նչն է այս տարի նորաձեւ, ի՞նչ միտումներ, թրենդներ են առավել ակտուալ. այս եւ այլ հարցերի պատասխանները գտնելու համար «Ժողովուրդ» օրաթերթը հատուկ մեր ընթերցողների համար զրուցել է հայտնի ոճաբան Գայա Գեւորգյանի հետ:

Քանի որ 2023-ի խորհրդանիշը սեւ ջրային ճագարն է, այս տարվա հիմնական գույնը կլինի սեւը, հետեւաբար ոճաբանը խորհուրդ է տալիս օգտագործել տարբեր համադրություններ:

Ջրային ճագարի հիմնական գույներից է նաեւ կապույտը (կապույտի երանգները):

Ոճաբան Գայա Գեւորգյանը նաեւ անդրադարձել է 2023 թվականի հաջողակ գույներին. դրանք են տաք վարդագույնը, կապույտը, մարգարտե սպիտակը, դեղինը, կարմիրը, կանաչը:

Լ. ԵՂԻԱԶԱՐՅԱՆ

ԼՈՒՐԵՐ

ԿՐԹԱԿԱՆ ԾՐԱԳՐԵՐ

ՀՀ կրթության, գիտության, մշակույթի եւ սպորտի նախարարության՝ «Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոն» եւ «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ների միջեւ ստորագրվել է համագործակցության հուշագիր: Հ. Պարոնյանի անվան երաժշտական կոմեդիայի պետական թատրոնի կողմից հուշագիրը ստորագրել է թատրոնի տնօրեն Կարո Շահբազյանը, իսկ Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոնի կողմից՝ կենտրոնի տնօրեն Աննա Կարապետյանը: Միջոցառմանը ներկա է եղել ԿԳՄՍ նախարարության ժամանակակից արվեստի վարչության պետ Սվետլանա Սահակյանը: Հուշագրի նպատակն է զարգացնել համագործակցությունը հետեւյալ ուղղություններով՝

-աջակցություն՝ «Երեխաների հատուկ ստեղծագործական կենտրոն» ՊՈԱԿ-ի զարգացման ռազմավարական ծրագրերի իրականացմանը եւ առաջխաղացմանը՝ ձգտելով երեխաների ավելի արդիական եւ լիարժեք կրթության ապահովմանը,

-աջակցություն՝ ներառական կրթության համատեքստում արտադպրոցական խմբակների ստեղծմանը, դասընթացների կազմակերպմանը եւ իրականացմանը,

-աջակցություն՝ ներառական կրթության համատեքստում մշակութային համագործակցության զարգացմանը:

Նախատեսվում է կազմակերպել հանդիպումներ թատրոնի անվանի արվեստագետների հետ, համատեղ իրականացնել թատերական ներառական ներկայացումներ, անցկացնել վարպետության դասեր, միջոցառումներ, մասնագիտական կլոր սեղան-քննարկումներ եւ այլն: Կողմերը վստահություն են հայտնել, որ արդյունավետ համագործակցությամբ կնպաստեն ներառական կրթության համատեքստում կրթական, մշակութային, ուսումնական եւ նորարարական համագործակցության զարգացմանը՝ նպաստելով ներառական կրթական ծրագրերում մշակութային բաղադրիչի ընդլայնմանը:

«ԻՆՏԵՐ»–Ը ՊԱՐՏՎԵԼ Է

Իտալիայի ֆուտբոլի առաջնության 19-րդ տուրի շրջանակներում «Ինտեր»-ը հյուրընկալել էր «Էմպոլի»-ին:

Առաջին կեսում երկու թիմերն էլ պահեր ստեղծեցին, սակայն չկարողացան դրանք արդյունավետ եզրափակել, իսկ խաղակեսի վերջնամասում «Ինտեր»-ը մնաց 10 ֆուտբոլիստով. երկրորդ դեղին քարտի պատճառով հեռացվեց Միլան Շկրինյարը:

«Էմպոլի»-ն, ի վերջո, կարողացավ օգտագործել թվային առավելությունը եւ նվազագույն հաշվով հաղթանակ տոնել: 66-րդ րոպեին գոլի հեղինակ դարձավ Տոմազո Բալդանցը:

Հայաստանի ֆուտբոլի ազգային թիմի նախկին կիսապաշտպան Հենրիխ Մխիթարյանը «Ինտեր»-ի մեկնարկային կազմում էր, սակայն փոխարինվեց 77-րդ րոպեին:

Այս տուրից հետո «Ինտեր»-ը Սերիա Ա-ի մրցաշարային աղյուսակում երրորդն է եւ ունի 37 միավոր:

● Հունվարի 28-ին Կոմիտասի անվան կամերային երաժշտության տանը տեղի կունենա Երգեհոնային երաժշտության համերգ-փառատոնը: Տոմսերի արժեքը՝1000-3000 դրամ: Սկիզբը՝ժամը 19:00-ին:

ԵՂԵ՛Ք ? ՏԵՂԵԿԱՑՎԱԾ

ՍՈՑԻԱԼԱԿԱՆ

ՀԱՐՑ. Կինս սպառնում է, որ առանց իմ համաձայնության մեր երեխային կտանի երկրից. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Սարգիս Պապեյան (36 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Երեխայի ապօրինի ելքը երկրից կանխելու նպատակով անհրաժեշտ է դիմել դատարան՝ ներկայացնելով երեխայի հետ տեսակցության կարգ սահմանելու պահանջ: Այս պահանջը ներկայացնելուն զուգահեռ՝ անհրաժեշտ է, որ դատարանին հայցի ապահովում կիրառելու մասին միջնորդություն ներկայացնեք՝ խնդրելով մինչեւ գործի ավարտն արգելել պետական իրավասու մարմիններին թույլատրել երեխայի ելքը ՀՀ-ից: Այս միջնորդությունը դատարանի կողմից բավարար-վելու դեպքում դատական ակտի պահանջը կկատարվի ՀՀ արդարադատության նախարարության դատական ակտերի հարկադիր կատարման ծառայության միջոցով, որը համապատասխան գրություններ կուղարկի սահմանապահ մարմիններին՝ պահանջելով արգելել երեխայի ելքը ՀՀ-ից: ՀՀ-ից երեխայի ելքն արգելելու միջնորդությունը կարող եք հիմնավորել նրանով, որ եթե ապագայում դատարանը բավարարի տեսակցության կարգ սահմանելու մասին պահանջը, ապա Դուք իրավունք կունենաք երեխային տեսակցել՝ ըստ սահմանված տեսակցության կարգի, եւ եթե երեխային արդեն իսկ դուրս տարած լինեն երկրից, ապա դատական ակտի կատարումը կդառնա անհնարին:

ՀՀ արդարադատության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Անձի ազատ տեղաշարժման իրավունքը ՀՀ տարածքով կամ դրանից դուրս՝ որպես կարեւորագույն իրավունք, սահմանված է ՀՀ Սահմանադրության մեջ, եւ այդ իրավունքը կարող է սահմանափակվել միայն բացառիկ դեպքերում, այն էլ՝ դատարանի որոշման հիման վրա: Ներկայում գործնականում կան մի շարք երկրներ (օրինակ՝ Վրաստան, ՌԴ եւ այլն), որոնք սահմանը հատելուց չեն պահանջում մյուս ծնողի գրավոր համաձայնությունը եւ բավարարվում են միայն նրանով, որ անչափահաս երեխային ուղեկցում է նրա ծնողը: Մի շարք այլ երկրներում, որտեղ տրամադրվում են վիզաներ, պահանջվում է պարտադիր ներկայացնել երեխայի մյուս ծնողի գրավոր համաձայնությունը, այն էլ՝ նոտարական կարգով վավերացված տարբերակով, եւ եթե ծնողը դա չի ներկայացնում, ապա այդ պետությունները արգելում են երեխայի մուտքն իրենց երկրի տարածք:

Էջը՝ ՌՈԶԱ ՊՈՂՈՍՅԱՆԻ

ԻՐԱՎՈՒՆՔ

ՀԱՐՑ. ՁՈՒ-ից ինձ հեռացրել են կարգապահական տույժի պատճառով, բայց ցանկանում եմ վերադառնալ. ի՞նչ անել եւ ո՞ւմ դիմել:

Նարեկ Բաղդասարյան (22 տարեկան)

ՊԱՏԱՍԽԱՆ. Զինծառայողներին կարգապահական պատասխանատվության ենթարկելու կարգն ու պայմանները սահմանված են «Զինված ուժերի կարգապահական կանոնագիրք» ՀՀ օրենքով: Նշված կանոնագրքով զինվորական ծառայությունից ազատելը հանդիսանում է ամենախիստ կարգապահական պատասխանատվության միջոցը: Նման պայմաններում անհրաժեշտ է պարզել, թե Ձեզ ինչպիսի խախտման համար են ենթարկել ամենախիստ կարգապահական պատասխանատվության: Հարկ է ընդգծել, որ, ի տարբերություն մյուս կարգապահական պատասխանատվության տեսակների (նկատողություն, խիստ նկատողություն, կոչման իջեցում եւ այլն), զինվորական ծառայությունից ազատելու կարգապահական պատասխանատվության տեսակի համար վերոնշյալ կանոնագրքով սահմանված չէ տույժը հանելու ժամկետներ, քանի որ դա կիրառելուց հետո խզվում են Զինված ուժերի եւ Ձեր միջեւ առաջացած իրավահարաբերությունները, հետեւաբար չկա սահմանված այնպիսի ժամկետ, որից հետո նոր կարող եք դիմել վերականգնվելու համար:

Վերականգնվելու նպատակով պետք է դիմում ներկայացնեք ՀՀ պաշտպանության նախարարին՝ ներկայացնելով, թե ինչի համար եք ենթարկվել կարգապահական պատասխանատվության, ինչու եք կրկին ցանկանում վերականգնվել զինվորական ծառայության, որից հետո դիմումով խնդրեք, որ Ձեզ վերականգնեն աշխատանքում: ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի վարչությունում կուսում-նասիրեն Ձեր անձնական գործը, ներկայացված դիմումը եւ, ըստ դրա, կկայացնեն որոշում:

ՀՀ պաշտպանության նախարարություն

«ԺՈՂՈՎՈՒՐԴ». Ձեր վերականգնվելու հնարավորությունների վերաբերյալ ավելի մանրամասն տեղեկություններ կարող եք ստանալ՝ զանգահարելով ՀՀ պաշտպանության նախարարության կադրերի բաժին հետեւյալ հեռախոսահամարներով՝ 010-29-45-73, 010-29-44-43, Թեժ գիծ՝ 1-28 կամ 010-29-46-99:

ԼՈՒՐ ԿԱԴՐ

Լուսանկարը՝ համացանցից

Հայկական արմատներով ռուս թենիսիստ Կարեն Խաչանովը դուրս եկավ Ավստրալիայի բաց առաջնության կիսաեզրափակիչ: Թենիսի «Մեծ սաղավարտի» տարվա առաջին մրցաշարի՝ Ավստրալիայի բաց առաջնության տղամարդկանց մենախաղի քառորդ եզրափակչում Կարեն Խաչանովը մրցեց ԱՄՆ-ն ներկայացնող, աշխարհի 31-րդ ռակետ Սեբաստիան Կորդայի հետ: Երկու սեթերից հետո Կորդան վնասվածքի պատճառով հրաժարվեց հետագա պայքարից: Խաչանովը հաղթում էր երկու սեթերից հետո՝ 7:6, 6:3 հաշվով:

ԲԱԺԱՆՈՐԴԱԳՐՈՒԹՅՈՒՆ

Մեր թերթը Բաժանորդագրվելու համար կարող եք դիմել

«Հայմամուլ» ՓԲԸ
հեռ. 45-82-00, 45-19-11

«Հայփոստ» ՊՓԲԸ
հեռ. 51-45-46, 51-45-47

«Բլից-Մեդիա» ՍՊԸ
հեռ 52-5301

Առաքումը՝ **ԱՆՎՃԱՐ**:

Ձեզ հետաքրքրող ցանկացած հարցով կարող եք դիմել «Ժողովուրդ» օրաթերթի խմբագրություն (**010 54-64-23** հեռախոսահամարով), եւ մենք անպայման կանդրադառնանք ձեր բարձրացրած բոլոր խնդիրներին:

ԱՌԱՋԱՐԿ
հայկական տպագիր մամուլից

«Ժողովուրդ» օրաթերթին բաժանորդագրվելու համար կարող եք լրացնել հետեւյալ բլանկը եւ ուղարկել նշված հասցեով: Ամեն օր թերթը կհասնի ձեր նախընտրելի վայր:

Բաժանորդագրության բլանկ

Անուն՝ _____
Ազգանուն՝ _____
Առաքման հասցե՝ _____
Բջջային եւ/կամ քաղաքային հեռախոս՝ _____

Հեռ.՝(060) 490049
0023, Արշակունյաց 2, 5-րդ հարկ, 518ա.

«Ժողովուրդ» օրաթերթում հրապարակված նյութերը արտատպելիս կամ ընթացիկ մեջբերումներ անելիս պետք է պարտադիր գրառել հետեւյալ նախադասությունը. «Շարունակությունը կարող եք կարդալ «Ժողովուրդ» օրաթերթի այսօրվա համարում»:

Լրատվական գործունեություն իրականացնող՝
«Ժողովուրդ թերթի խմբագրություն» ՍՊԸ
Հասցեն՝ ք. Երեւան, Աբովյան 22ա/3, հեռ՝ **010 54-64-23**
Պետական գրանցման վկայականի համարը՝ 03Ա089086
տրված է 24.11.2010
Ստորագրված է տպագրության **24.01.2023**
Հասցեն՝ Գերարքունիքի մարզ, ք. Վարդենիս, Վ. Հակոբյանի 2/21

Գլխավոր խմբագիր՝
ՔՆԱՐ ՄԱՆՈՒԿՅԱՆ

Տպագրված է «ԳԻՆԴ» տպարան ՍՊԸ հրատարակչությունում
Խմբագրություն հանձնված նյութերը չեն գրախոսվում եւ չեն վերադարձվում, **Գ** նշանով նյութերը գովազդային հրապարակումներ են, որոնց համար խմբագրությունը պատասխանատվություն չի կրում: